

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԵՐԸ ԵՎ ԽԱՋԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

I

Վիմագիր հիշատակարանների առանձին նմուշներ իրենց պատմագրքերում, յուրովի խմբագրմամբ, մեջ են բերել կամ վկայակոչել Մովսես Խորենացին, Ստեփանոս Օրբելյանը, Կիրակոս Գանձակեցին, Առաքել Դավրիժեցին, նաև ուրիշ պատմագիրներ, սակայն առաջին փորձը՝ մի վանքի կամ մի գավառի վիմական արձանագրությունները հավաքելու առումով, միայն XVII դարի վերջերին և XVIII-ի սկզբներին է արվում: Դրա նախաձեռնողները Զաքարիա Սարկավազ Քանաքեռցին (1627—1699) և Եսայի Հասան-Ջալալյանցն էին (վախճ. 1728)՝ ժամանակի երկու նշանավոր հոգևոր գործիչներ ու մատենագիրներ: Այս վերջինը՝ Արցախ գավառի հոգևոր առաջնորդը, տակավին 1718 թ. առանձին մատենիկում ընդօրինակել էր Գանձասարի և Աղվանից աշխարհի ուրիշ վանքերի վիմագրերը: Ունե՞ր այդ աշխատությունը հատուկ ներածական, կամ թե՛ հին օրերի համար պարտադիր հիշատակարան, որոնք գաղափար տալին վիմագրերի վերաբերմամբ հեղինակի պատկերացումների մասին՝ պարզ չէ, քանի որ Ե. Հասան-Ջալալյանցի բուն ձեռագիրը չի պահպանվել (գոնե մեզ անձանոթ է): Կա 1822 թ. հուլիսի 1-ին նրանից արտագրված մի կիսատ օրինակ՝ կատարված էջմիածնի երբեմնի գրագիր ու ծաղկարար Հովհաննես Եպիսկոպոս Հովհաննիսյան Մշեցու ձեռքով, մի երկրորդ արտագրություն, կատարված Շահխաթունյանցի համար, արդեն 30-ական թթ., որն այնուհետև, որոշ բացթողումներով ու լրացումներով, դեռեղված է վերջինի «Ստորոգութեան» երկրորդ հատորի եզրափակիչ մասում²:

Ուրիշ է Զաքարիա Քանաքեռցին: Նա և՛ ժամանակով է նախորդում Ե. Հասան-Ջալալյանցին (երեսուն տարի), և՛ սկզբունքներով, որոնք ամբողջությամբ ընդունելի են: Զաքարիան ոչ միայն առարկայական առումով շատ լուրջ գործ

1 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 9923 (վերջինից մեկ այլ արտագրություն տես ձեռ. № 4537):

Հստ Մ. Թաղիադյանցի մի վկայության («Ծանապարհորդութիւն ի Հայս», հ. 1, Կալկաթա, 1847, էջ 332), 1822 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, մինչ ինքն Արցախում էր, ներսես Աշտարակեցու հանձնարարությամբ շրջել է «ի մերձակայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչքարս, և ի վէմս ապառաժից, սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին, զոր և մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա՝ որ յետոյ կորեան»:

Հիշյալ ընդօրինակություններից և՛ Ն. Աշտարակեցու դիվանում, և՛ այլուր, որևէ հետք չի մնացել, եթե միայն Հովհաննես Եպիսկոպոս Մշեցուն վերագրվող հավաքածուն իրականում Թաղիադյանցի ջանքերի արդյունքը չէ, և Մատենադարանի այժմյան № 9923 ձեռագրի գրիչն էլ դարձյալ Թաղիադյանցը չէ: Դա շատ հնարավոր է, մանավանդ որ Հովհաննես Եպիսկոպոս Մշեցին (նույն ինքը՝ Բագրևանդացի) Թաղիադյանցի խնամակալն էր էջմիածնի վանքում: Նման պարագայում Արցախի արձանագրությունները Թաղիադյանցն արտագրել է Եսայի Հասան-Ջալալյանցի ժողովածուից, իսկ Հաղբատինն ու Սանահինը՝ անձամբ ընդօրինակել:

2 Նույն տեղում, ձեռ. № 7821: Հ. Շահխաթունյանց, Ստորոգութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. II, Վաղարշապատ, 1842, էջ 356—382:

է գլուխ բերել՝ վիճաբար ու այլ կարգի նյութերի օգնութեամբ շարադրել «Կոն-դակ սուրբ ուխտին Յովհաննու վանից» աշխատութիւնը, դրանով իսկ կազմելով նաև հիշյալ հոգևոր կենտրոնի վիճաբարի հավաքածուն, այլ նաև մշակել (թեպետև պարզունակ) վիճաբարի հավաքման սկզբունքներ, որոնք նորութիւն են ինքնըստինքյան և իրավունք են տալիս համարելու նրան նոր դարաշրջանի վաղ արշալույսին հայոց վիճաբարի հավաքման գործի սկզբնավորող:

Ահա՛ թե ինչով է ղեկավարվել Զաքարիան վիճաբարն ընդօրինակելիս. «...Թէ՛ արձանքն՝ որ յորմունս, և թէ՛ յիշատակարանս դրոց ի բաց հանար, եւ որոց և թուականն ի գլուխ արձանին էր, և մեք նոյնպէս ի գլուխն գրեցաք, թէ՛ սկիզբն, թէ՛ մէջն, և թէ՛ վերջն, նոյնպէս և մեք գրեցաք. որ ոչ գոյր թուական, զնոյն և մեք ոչ գրեցաք, զի ընթեռնելով զարձանն և զԿոնդակն՝ ոչ յարի՛ առ միմեանս, և զմեզ այսպանիցեն՝ սուտ համարելով զմեզ: Եւ որք ինչս էիս տուեալ, մեք զայն ոչ գրեցաք. զի դրեալ են նոքա ի գիրն կենաց: Եւ զոր ինչ գրեցաք, ի կարգին զթուականն, զի մի՛ յետ և յառաջ լիցի թուականն, այլ կարգաւ զամենայն, թէ՛ ի տաճարն, և թէ՛ ի գաւիթն, մեք զկարգն ուղղեցաք: Նոյնպէս նշանակեցաք զտեղին, թէ՛ այս ինչ է դրեալ յայս ինչ տեղոց, թէ՛ ի գաւիթն, և թէ՛ ի տաճարն՝ զտեղին նշանակեցաք, զի յընթեռնելով Կոնդակիս՝ դիրեաւ գտցեն յորմունսն, և մի՛ վրիպիցեն: Նաև զնկարագիրն թէ՛ և կարի աշխարհօրէն էր և անյարմար, և մեք զնոյն գրեցաք, և զշարադրութիւնն՝ ոչ փոխեցաք, զի մի՛ ընթերցողքն այսպանիցեն զմեզ, և զաշխատանս իմ ապախտ առնիցեն: Այլ որպէս և էրն՝ նոյնպէս գրեցաք...»³:

Ստորև, եբք անդրադառնանք Ներսես Աշտարակեցու հրահանգներին վիճաբարի հավաքման վերաբերյալ, որոնց անուղղակի թելադրողը Սեն-Մարտենն էր, պիտի տեսնենք, որ Զաքարիայի համեմատութեամբ վերջիններն ամենեւին էլ որեւէ էական նորութիւն չեն պարունակում: Զաքարիան ուշադրութիւն է դարձնում անդամ արձանագրերի գեղջուկ լեզվի ճիշտ վերարտադրման վրա, որ Ներսեսի մտքով իսկ չի անցել: Ավելին, որքան էլ սնահամատ և միջնադարյան մտածողութեամբ կաշկանդված, Զաքարիան այնուհանդերձ նախում էր առաջ, ուներ ազգային արժանապատւոյթյան նրբին զգացում, գիտակցում էր օտար բունապետների տեական տիրապետութեան հետեւանքով ալլանդակված կամ մոռացված հայրենի տեղանունների վերստուգման ու վերականգնման խնդիրը, հետամտում գտնելու դրանց բնիկ, հայկական ձևերը⁴:

Զաքարիա Սարկավազ Քանաքեռցին, ըստ ամենայնի, հայոց վիճաբարի հավաքման գործի սկզբնավորողն է՝ նրան այս առումով շատ բարձր է գնահատել նաև մեծ գիտնական Մանուկ Աբեղյանը և դեռևս անցյալ դարի 90-ական թթ. վերջերին Գևորգյան ձեմարանում կարդացած դասախոսութիւնների ժամանակ հայտարարել. «Զաքարիան հանդիսանում է մեր հնագրական արձանագրական թանկագին հիշատակարանները ժողովողների նախահայրը»⁵:

³ «Զաքարիայ սարկավազի Պատմադրութիւն», հատ. III, Վաղարշապատ, 1870, էջ 15—16:

⁴ Նույն տեղում, զլ. X:

⁵ Այս տեսակետի պաշտպանն է ներկայումս նաև հնագետ Կ. Ղաֆազարյանը (մեզ ուղղված մասնավոր նամակ):

⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Դ, Երևան, 1970, էջ 256: Թե Զաքարիայի գործն ինչ արժեք ունի հայագիտութեան համար, հետախնդիր ընթերցողը կարող է տեսնել նաև՝ Կ. Ղաֆազարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1948:

Հովհաննավանքի արձանագրությունները Զաքարիան հավաքել և նրանց հիման վրա վանքի Կոնդակը գրել է հայոց ռճլդ=1687 թվականին:

XVIII դ. հետագա տասնամյակներին, գոնե Արևելյան Հայաստանում, Զաքարիա Սուրկավազը և Եսայի Հասան-Ջալալյանցն իրենց հետևորդները չունեցան: Միայն հաջորդ դարասկզբին հրապարակ է գալիս հնօրյա արձանագրությունների մի երրորդ չիրահար՝ Հովհան Ոսկերչյան քահանան, որը դժբախտ հանգամանքների բերումով տարագրվելով հայրենի Վաղարշապատից, Տեր-Նաչատուրի հետ 1804 թ. շրջել և ընդօրինակել է Անիի, Մարմաշենի, Հառիճի, Հաղբատի, Սանահնի ու մի քանի այլ վանքերի վիճազորներու նրա բուն ձեռագիրը ևս մեզ մատչելի չէ, բայց կա Հարություն Արարատյանի և Ելապրոտի ֆեանսներեն թարգմանությունը⁷, հայերեն մի սխալաշատ հրատարակություն⁸ և առանձին հատվածներ՝ Մ. Բժշկյանի «Ճանապարհորդութեան» տարբեր էջերում մեջ բերված:

Ոսկերչյանից հետո արդեն վիճազորներով հետաքրքրվողները շատանում են, որոնցից արժե հիշել գեթ Հովհաննես Եպիսկոպոս Հովհաննիսյան Մշեցուն, որը 1822 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ընդօրինակել է Հաղբատի և Սանահնի բաղմաթիվ արձանագրություններ, իսկ ավելի վաղ պատճենավորել Ե. Հասան-Ջալալյանցի ժողովածուն:

Սկսած դարասկզբից, մասամբ անձնական հետաքրքրությունից դրդված, մասամբ էլ ընդառաջելու համար ուրիշների ցանկություններին և օգտագործելով իր հոգևոր բարձր պաշտոնը, այլևայլ անձանց արձանագրություններ հավաքելու հանձնարարություններ է տալիս նաև Ներսես Աշտարակեցին, դրանով իսկ անուղղակիորեն մեկնեա հանդիսանալով Հովհաննես Ղրիմեցու «Պատմութիւն հռչակավոր վանից Հաղբատայ սուրբ Նշանին» երկասիրությանը, որն իր գիտական արժեքը պահում է այսօր էլ՝ դրությունից ավելի քան հարյուր քառասուն տարի հետո:

Ղրիմեցին չի բավարարվել սոսկ արձանագրությունների հավաքմամբ: Վերջինների հիմամբ նա գրել է իր շափսղանց արժեքավոր աշխատությունը Հաղբատի մասին, շարադրելով այս հոգևոր կենտրոնի հանգամանալից պատմությունը սկզբնավորման շրջանից մինչև իր օրերը՝ ամեն անգամ ասածը հաստատելով համապատասխան վիճազորների մեջբերմամբ, որոնց ընդհանուր թիվը հասնում է 143-ի (ըստ Կ. Ղաֆաղարյանի հաշվումների): Գիրքն ավարտվել է 1827 թ. միայն, երբ Ներսես Աշտարակեցին ուսական զորքերի հետ երևանում էր: Մտադրություն կար այն տպագրել (անտարակույս, Ներսիսյան դպրոցի տպարանում)⁹, բայց շատ շանցած՝ Աշտարակեցին ուղարկվում է «կամավոր աքսոր»՝ Բեսարաբիա, և ամեն ինչ կեսկատար մնում: Շատ տարիներ հետո, ճակատագրի քմահաճությամբ, գիրքը լույս տեսավ սկզբում ուսերեն՝

⁷ «Mémoire de Jean Oskerdjan», Փարիզ, 1818 (ընդարձակ խորագիրը՝ Ousok' Herdjan J. Mémoire pour servir a l'histoire des évènements qui ont eu lieu en Arménie et en Géorgie, a la fin du XVIII^e siècle et au commencement du XIX^e siècle. Suivi de 28 anciennes inscriptions arméniennes trad. Paris, 1818, 79 էջ. արտագրել ենք Ա. Սալմասյանի «Հայկական մատենագիտությունից», Երևան, 1969, էջ 106):

⁸ «Կոունկ հայոց աշխարհին», 1862, № 4, էջ 272—316:

⁹ Այսպես ենք ասում, նկատի առնելով Ղրիմեցու «Պատմութեան» Ներսես Աշտարակեցուն ուղղված նախարան-ուղերձի այս բառերը. «...համաձայն իսկ կանխակալ ձերգ գովանի առաջադրութեան ի հրատարակել տպագրութեամբ...» (էջ ԺԸ):

խիստ համառոտ տարբերակով, և միայն 1965 թ.- բնագրի լեզվով¹⁰, և ահա՝ թե ինչու:

Ռուսերեն համառոտությունը՝ արձանագրությունների հայերեն բնագրերով հանդերձ, սենատոր Հանի ջանքերի շնորհիվ 1840 թ. ուղարկվել էր Պետերբուրգի Ասիական թանգարանին, և հանձնարարվել էր արևելագետ Մ. Բրոսեին ուսումնասիրել և հրատարակել գրանք, բայց նա այդ գործը զուիս բերեց շատ ուշ, 1863 թ. միայն, Ղրիմեցու ժողովածուին կցելով նաև մի ֆրանսերեն վերջաբան¹¹, Բնագրի հրատարակողը Մխիթարյան բանասեր, հանդուցյալ Համադասպ Ոսկյանն է¹²:

Իսկ ինչպե՞ս է վիճագրերի հավաքման խնդիրը ցարդ լուսաբանվել:

Հայոց վիճագիր հիշատակարանների հավաքման պատմության լավագույն գիտականներից մեկը՝ հանդուցյալ հնագետ Ս. Բարխուդարյանը, «արձանագրությունների սիստեմատիկ հավաքման և հրատարակման» սկիզբը համարել է Ա.Մ. Լ. առաջին քառորդը, նկատելով, որ հիշյալ շրջանում, «չնայած դարասկզբի տասնամյակների ավերիչ սպառնալիքներին և մասսայական տեղափոխություններին, հայ իրականության մեջ գտնվում են առանձին անհատներ, որոնք ուշագրություն են դարձնում այդ կարևոր գործի վրա»¹³, իբրև վիճագրերի հավաքմանը նախանձախնդիր անձանց մեջ ամենաձեռներեցը, մատնանշվում է Ներսես Աշտարակեցին՝ անցյալ դարի առաջին կեսի հայոց քաղաքական ու հոգևոր շարժման պարագլուխներից մեկը:

¹⁰ Նախքան ամբողջական բնագիրը լույս տեսնելը, նրանից ընդարձակ հատվածներ իրենց աշխատություններում մեջ են բերել հնագետ Կ. Ղաֆադարյանը («Հաղբատ», Երևան, 1963) և բանասեր Հ. Ոսկյանը («Դուրաբի վանքերը», Վիեննա, 1960): Մի հատված էլ Հաղբատի ձեռագրերի ոչնչացման մասին տե՛ս «Բազմավեպ», 1956, էջ 108—110:

¹¹ «Описание монастырей Ахпатского и Санагинского, архимандрита Иоанна Крымского», St. Petersburg, 1863 (տպագրված՝ Ս. Պետերբուրգի կայսերական ակադեմիայի նոթերում, մատենաշար VII, հատ. VI, պրակ VI): Մ. Բրոսեի ասելով՝ Ասիական թանգարանում պահվելիս են եղել Հաղբատի և Սանահնի արձանագրություններ պարունակող երկու այլ տետրակ ևս, որոնց ընդօրինակման թվականը և նախաձեռնողների անունները չի հիշում: Տետրակներից երկրորդը, որ Բրոսեին էր տրամադրել ոմն բարոն Շիլլինգ, «նախորդից քիչ է տարբերվել»: Ինչ վերաբերում է Հովհաննես Ղրիմեցու աշխատությանը, ապա այն, Բրոսեի ասելով, շարագրվել է ռուսերեն: Ձեռագիրը հայերեն բնագրի հետ բաղդատել, թարգմանության հավատարմությունը հավաստել և կայսերական ակադեմիային է «հաղորդել» (ուղարկել) էջմիածնի սինոդի դատախազ Թովմա Ղորղանյանը:

Ակադեմիային մատուցված տարբերակի խորագիրն է «Описание двух знаменитых армянских монастырей Ахпат и Санагин, состоящих в Борчалинской дистанции Грузии». Բաղկացած է չորս մասից. 1. Հաղբատավանքի համառոտ նկարագրությունը և վիճագրերը, 2. Սանահնի վանքի համառոտ նկարագրությունը և վիճագրերը, 3. «Արձանագրութիւնք վանիցն Հաղբատայ» (հայերեն բնագրեր), 4. «Արձանագրութիւնք վանիցն Սանահնայ» (հայերեն բնագրեր): Ձեռագիրը ներկայումս պահվում է ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի լենինգրադի բաժանմունքի մատենադարանում, № С 45: Կարծում ենք, որ Ղորղանյանն էլ եղել է այդ գործը ռուսերեն թարգմանողը, քանի որ Հովհաննես Ղրիմեցին թեպետև իմացել է ռուսերեն խոսակցական լեզուն, բայց հազիվ թե այն բավարար լիներ որևէ գիտական աշխատություն ռուսերեն թարգմանելու համար (նույն տեղում, էջ 69):

¹² «Յովհաննու Ղրիմեցու Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ ս. Նշանին», հրատարակեց Հ. Համադասպ Ոսկյան, Վիեննա, 1955 (Հայկական մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության):

¹³ Տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ XVIII:

Այնուհետև մեջ բերելով ներսես Աշտարակեցու՝ 1825 թ. օգոստոսի 31-ին Մանասնի վանքի միաբան Հարություն Տեր-Բարսեղյանցին ուղղված նամակը՝ արձանագրություններ հավաքելու հրահանգով¹⁴, Ս. Բարսեղյանը եզրակացնում է, թե «այդ հրահանգ-նամակով, փաստորեն, հիմք է դրվել մի նոր և կարևոր գործի», որ «չհրատարակված այդ փաստաթուղթը պարզում է Աշտարակեցու գործունեության մի կարևոր բնագավառ ևս...»¹⁵:

Անկախ նրանից՝ համամիտ ենք առաջադրված դրույթին, թե ոչ, հարկ է նշել, որ ժամանակագրական անճշտություն է սպրդել այդտեղ:

Իրականում ներսես Աշտարակեցին հայկական վիժադրերի հավաքմանը հետամտում էր դրանից առնվազն մի տասնամյակ առաջ՝ պաշտոնական հանձնարարություններ տալով այլևայլ անձանց, որոնցից շուրջ 1815 թ. ստացված արձանագրությունների ընդօրինակությունները՝ Անիից, Սարմաշենից, Բագարանից, Տփղիսից ու այլ վայրերից, տակավին հրատարակված չեն, գտնվում են Մատենադարանի վավերագրերի բաժնում¹⁶: «Ըստ յարգելիդ հրամանի որ վասն դրութեան արձանաց Անույ քաղաքի, ինչ-ինչ քաղեալ ի նոցունց զհնարաւորսն առաքեցաք ընդ պատուածան Պետրոս վարդապետին», — զեկուցում էր 1815 թ. հունիսի 15-ին Ղոշավանքից նրա թղթակիցներից մեկը՝ Իսահակ Լրեց Սահրադյանը¹⁷:

Միայն արձանագրությունները չէ, որ գրավում էին ներսես Աշտարակեցուն: Նրա դիվանում մնացել են հոգևոր գործիչներին ուղղված հրահանգներ:

14 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ներսես Աշտարակեցու դիվան, N 166/378: Բնագիրը հետևյալն է (արտագրում ենք ինքնադրից)․

«Արժանապատիւ Յարութիւն վարդապետ.

Որպէս աստէն քեզ ի դէպ համարեցաք ասել, այնպէս ահա դրեմ քեզ զի թէ չգոյէ արգելք իմն ի կասկածանաց վնասուց իրիք, ոչ անազան զաշիատանս ի գործ եղեալ ջան ունիցիք հաւաքել զամենայն զիշատակադրութիւնս գտանեցեալս ի վերայ բարաւորաց դրանց եկեղեցեաց կամ ի վերայ որմոց նոցին ի ներքուստ և արտաքուստ և կամ ի վերայ գերեզմանաքարանց հնագունից հոգևորականաց և մարմնաւորականաց, և զգուշաւոր ուղղագրութեամբ բերել առ մեզ վասն տպել տալոյ յաղագս յաւիտեանական ապահովութեանց իւրաքանչիւրոց նոցին, զի մի հնութիւն ժամանակաց հնարեսցի կորուսանել զայնս եղ<ծ>մամբ ի ձեռն փտութեանց կամ հակառակորդաց ոմանց:

Այլ պատուիրեմ յատկապէս զի որքան կարօզ լինիցիք մի ծուլասջիք վասն դժուարութեան լերանց և ձորոց յորս գտանիցին եկեղեցիք, զանցառու լինիլ անհոգաբար, քանզի պարտ է զմտաւ ածել նախ զերախտիս շինողացն զայնս, և զսէր նոցին ըստ հաւատոց, և այնպէս ապա վասն հաւատոց լինիլ հետամուտ առ անջնջելի առնել զայնս, որով գտանիք հաղորդակից նոցին բարեպաշտութեանց, և ես ևս եղէց ձեզ շնորհակալ:

Եւ զայս ոչ անդէպ համարիմ յայտնել ձեզ, զի ուր ուրեք գտանիցին գրուածք, զորս ոչ կարողասջիք դուք կարդալ, նշանակեսջիք զտեղի այնպիսեացն թէ ի վերայ ո՞ր եկեղեցւոյ և ի վերայ ո՞ր կողմանն որմոց նորին գտանի գրուածն դժուարընթերց:

Համար 196, 1825, օգոստոսի 31»:

15 «Դիվան հայ վիժագրության», պրակ 1, էջ XVIII:

16 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, N 29/125:

17 Նույն տեղում, էջ 20: Այս վավերագրին կից է նշանավոր Հովհան քահանա Մարտիրոսյան Ոսկերչյանի մի կարևոր գրությունը էջմիածնի ու շրջակա գյուղերի բնակիչներին՝ 1804 թ. գաղթի և 1806 թ. Հավլաբարում հաստատվելու վերաբերյալ (էջ 16): Ինչ վերաբերում է Իսահակ Լրեց Սահրադյան Ղոշավանքեցուն, ապա նա XIX դ. մատենասեր հոգևորականներից էր, հետադայում, 1840-ական թթ., բնակվում էր Ալեքսանդրապոլում և մինչև 1848 թ. կենդանի էր: Հայտնի է նրա «Համառօտ պատմագրութիւն զանցից երևելեաց հանդերձ ժամանակագրութեամբն, որք ի կրկին Շիրակս և մասամբ իմն ի Ղարս, ի Կարին, ի Տփլիզ, ի Գանձակ և յԾրեան» երկը, տպագրված՝ «Դիվան հայոց պատմության», գ. Ժ, Թիֆլիս, 1912, էջ 439—458:

4 Հաճղես, N 2

ու խնդրանքներ՝ հայոց հին ձեռագրեր ու դրամներ հավաքելու վերաբերյալ ևս, որոնցից միայն մեկը կրկրենք ստորև:

«Քանիցս ի քանի ամաց հետէ,—գրում էր Աշտարակեցին 1823 թ. նոյեմբերի 10-ին, Արևմտյան Հայաստան մեկնած Անտոն Մուղնեցուն,— դուք ևս բաղում ցաւակցութեամբ ձեր գտեալ խորհրդածու ի վերայ տարաբախտութեանց Աթոռոյ մերոյ համանգամայն և բոլոր ազգի Հայոց յաղագս անհոգանալոյ նոցին ի մասին նախնական գրեանց անկորուստ պահպանելոյ և աղքատացուցանելոյ դամենարժան գանձարան գրատանց<...>»:

Արդ ուրեմն լիշեցուցանելով ձերում սրբադնութեան դմաքուր ցաւակցութիւն ձեր՝ խնդրեմ, յամենայն քաղաքս և ի գէօղս անմոռաց ունիլ ի մտի չբարեգոյն դայն բաղձանս ձեր և իմ, և մտայոյդ երկասիրութեամբ ջանալ հետազօտել վասն գրութեանց նախնեաց, ուր և կարելի գոցէ գտանել զհին ձեռագիր թէ ընթերցանելի հասարակ ներկայական գրութեամբ, և թէ դժուարընթեռնելի հնոցն գրութեամբ, կամ խնդրանօք վասն յաւերժական յիշատակի տուողացն, և կամ դրամովք Աթոռոյն ստանալ դայնս վասն գրատան Աթոռոյն՝ թէ և գուցեն այնպիսիք ցրեալք ըստ մասին և կամ կրճատեալ թերթիք:

Ըստ կարգի այլ ամենայն այնպիսի գրեանց՝ Յայսմաւորք կամ Ծաշոցք և կամ այլ եկեղեցական գրեանք՝ յորս գտանիցին զանաղանութիւնք ինչ ընդ տպագրելոցն յաղօթսն գտանեցեալսն ի Ծաշոցսն և կամ յայլսն, ընդ որս և Տօնացոյցք ձեռագիրք յառաջ քան զ4 կամ 5. հարիւր տարի, յորս գտանիցին այլայլութիւնք ինչ անուանց սրբոց կամ կարգաց տօնից, մի՛ անարժան հայտնեցիս ստանալ և զայնպիսիսն, զի վասն հնագիտութեանց պիտանագոյն ևն ամենայն այնպիսիք:

Ըստ գրեանց և վասն հնագոյն դրամոց խնդրեմ ունիլ զփոյթ ո՛չ սակաւ՝ թէ արծաթէից և թէ ոսկեայց կամ պղնձէից, յորս և յաւէտ յաղագս Հաւկաւանց թագաւորաց դրամոց, որովք թէ գտցես զիս կենդանի՝ ուրախ առնես զիս, և թէ ո՛չ՝ կացուցանելով զիս ձեզ պարտաւոր, թողուս զայնոսիկ արձան յիշատակի ձերոց բարեջանութեանց յօգուտ տպագայից և ի փառս երկնահանգոյն Աստուածընկալ մայր Աթոռոյ ամենայն Հայոց սրբոյ կաթողիկէ էջմիածնի»¹⁸:

Մեջբերած վավերագրում թեպետև վիմագրերի մասին բառ իսկ չկա, բայց «քանիցս ի քանի ամաց հետէ» արտահայտութիւնը ցույց է տալիս, որ և՛ Ներսէսի, և՛ Անտոն Մուղնեցու շատ տարիների մտահոգութեան առարկան է եղել հայոց պատմութեան զանաղանատիպ հիշատակարանների հավաքման յժվարին խնդիրը:

Որովհետև 1814 թ. գարնան սկզբից Ներսէսն այլևս էջմիածնում չէր, փոխադրվել էր Տփղիս, իրրև վերահայոց հոգևոր թեմի առաջնորդ, իսկ Անտոն Մուղնեցին շարունակաբար լինելով նվիրակութեան մեջ Արևմտյան Հայաստանում, Ներսէսի հետ վերստին հանդիպելու առիթ չունեի մինչև 1822 թ., տրամաբանական է եղրակացնել, որ նրանց հանդիպումներն ու զրույցները առիդ են ունեցել 1814 թ. սկզբներին ու ավելի վաղ: Այդ նշանակում է, որ ինչպես ձեռագիր, այնպես էլ վիմագիր հիշատակարանների հավաքմանը Ներսէսը հետամտել է դարասկզբից, 1810-ական թթ. սկսած: «Քանիցս ի քանի ամաց հետէ» արտահայտութիւնը նշանակում է «շատ տարիներից ի վեր ու

¹⁸ Ս աշտոռի անվ. Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու դիվան, № 65/812:

շատ անգամներ» 1823 թ. համեմատությամբ 1810—1814 թթ. ճիշտ որ այդ պիսին էին: Բացի այս, ձեռքի տակ ունենալով Իսահակ երեց Սահրադյանի 1815 թ. հունիսի 15-ի արդեն վկայակոչված պատասխան նամակը, կարող ենք անվարան եզրակացնել, որ վիրահայոց առաջնորդ դառնալու օրերից, լգտվելով քաղաքական բարեպատեհ հանգամանքներից (Վրաստանի և նրան կից հայոց գավառների բնակչությունը Թուսաստանի տիրապետության տակ էլ արդեն), նժրսես Աշտարակեցին սկսել էր իրականություն դարձնել հայոց պատմության ձեռագիր, վիժագիր և այլ կարգի հիշատակարանները հավաքելու իր ծրագիրը: Այս բոլորով հանդերձ պատմական ճշմարտությանը հավատարիմ մնալու համար պիտի նորից կրկնենք, որ Զաքարիա Քանաքեռցին է հայոց վիժագրերի առաջին հավաքողը նոր դարաշրջանում (որի գաղափարաբանական կերտվածքը մեզ մոտ ուրվագծվում է տակավին XVII դ. վերջերին և XVIII-ի սկզբներին), իսկ առաջին վավերագիրը՝ նրա «Կոնդակից» վերևում մեր բերած քաղվածքն է, բայց ոչ ներսեսի 1825 թ. օգոստոսի 31-ի նամակը:

Կա մի ուրիշ, ոչ պակաս կարևոր հանգամանք ևս, որ դարձյալ ուշադրության շեն առել վիժագրության պատմության գիտականը:

Անգամ, եթե Զաքարիա Սարկավագի, Նսայի Հասան-Ջալալյանցի, Ոսկերչյանի կամ էլ 1815 թ. ներսեսի հանձնարարությամբ Իսահակ երեցի ու այլոց հավաքած արձանագրությունները մեջտեղում չլինեին, դարձյալ 1825 թ. օգոստոսի 31-ի հրահանգ-նամակը հայ վիժագրերի հավաքման գործի սկզբնավորման առաջին վավերաթուղթը չէր դառնա այն պարզ պատճառով, որ դրանով ներսես Աշտարակեցին Հարություն վարդապետ Տեր-Բարսեղյանցին սոսկ հիշեցնում էր նախկինում տրված հանձնարարությունը՝ Սանահնի վանքի ու մերձակա վայրերի վիժագրերը հավաքելու մասին: Բուն հանձնարարությունն արված էր նամակի գրությունից ավելի քան երկու տարի և չորս ամիս առաջ, 1823 թ. ապրիլի 4-ին:

Այդ օրը ներսես Աշտարակեցին հատուկ նամակ էր հղել Հովհաննես Ղրիմեցուն՝ էջմիածնի վանքի երբեմնի լուսամիտ գործիչներից մեկին, որին այժմ վստահված էր Հաղբատի մենաստանը, և վանական տնտեսության բարվոք կառավարման վերաբերյալ մի շարք հրահանգներ տալուց հետո, ավելացրել հետևյալ, հույժ կարևոր տողերը.

«Ի Փարիզոյ՝ ոմն Ֆռանկօզ պատմագիր նոր՝ խնդրեալ է աստ ի պարոն Կամբայ քօնսլօզէն Ֆռանկաց առաքել ինքեան զօրինակս ամենայն արձանագրութեանց եղելոց ի Հաղբատ և ի Սանահն, կամ ի վերայ քարանց եկեղեցւոյն և կամ ի վերայ գերեզմանաց ննջեցելոց. նա և ծանուցանել՝ թէ ուրքան գտանին ի նոսա գերեզմանք թագաւորաց Հայոց և զինչ անուն իւրաքանչիւրոց նոցա, յաղագս որոյ ևս խնդրեաց մեղ բարեկամն մեր յիշեալ քօնսլօզն. ըստ որոյ և ես գրէմ քեզ՝ բարւոք զգուշութեամբ աշխատիլ գրել զամենայն զարձանագիրս եղեալ ի վերայ ամենայն որմոց եկեղեցւոյն, ծանուցանելով նա և զտեղին արձանագրութեանց իւրաքանչիւր յատկութեամբ. այն է՝ արեւելեան կամ արեւմտեան, հարսւային կամ հիւսիսային, ի վերայ սեան կամ ի վերայ պատին, ի ներքուստ կամ յարտաքուստ, և այլ որպիսի և իցէ յատկութեամբ իւրաքանչիւրոց նոցին. նոյնպէս և վասն գերեզմանաց թէ ուր իցեն, կամ որն ի նոցունց իցէ ընդ յաջմէ կամ ընդ ձախմէ միւսոյն կամ յառաջոյ՝ յարեւելս կոյս և կամ յետոյ՝ յարեւմուտս կոյս, նոյնպէս և վասն գերեզմանաց

թագունեաց և երեւելի իշխանաց կամ առաջնորդաց և կամ այլ վարդապետաց և արժանաւոր արանց:

Խնդրեսցես և սրբազան Առաքել արքեպիսկոպոսին, զի և նա հրամայեցէ Յարութիւն վարդապետին իւրոյ գրել նմանապէս դամենայն զգտանեկեալս ի վերայ որմանց և գնրեզմանաքարաց և առաքէ կանխաւ, զի տայուր խնդրողին, յորմէ մեզ ո՛չ ինչ վնաս, և խնդրողին բաւականութիւն մեծ»¹⁹:

Այս, իսկապես հրահանգ-նամակում հիշված անձնավորութիւններից եւամբան (Գամբա) Տփղիսի այն տարիների ֆրանսիական հյուպատոսն էր և չարպիկ ձեռնարկատեր (զբաղվում էր բամբակի մշակութեամբ և անտառաւելութի արդյունահանմամբ), Առաքել արքեպիսկոպոսը՝ Սանահնի վանքի վանահայրը, իսկ Հարութիւն վարդապետը՝ Սանահնի վանքի արդեն հիշված միաբան, շնորհի Հարութիւն Տեր-Բարսեղյանցը:

Այժմ արդեն անառակելի է դառնում, որ որպես թե 1825 թ. Հարութիւն վարդապետին ներսես Աշտարակեցու տված հանձնարարութիւնը մասն էր այն ընդհանուր գործի, որի իրականացմանն էր ձեռնարկել նույն 1823 թ. Հովհաննես Ղրիմեցին (ավարտեց 1827 թ.): Ժամանակին դրել են, որ Հարութիւն վարդապետը ևս ավարտած է եղել Սանահնի վիմագրերի հավաքումը, բայց նրա ձեռագիրը մեզ չի հասել, և հետախնդիր վիմագրագետներից ո՛չ մեկն էլ նրա բովանդակութեան մասին ոչինչ չգիտե²⁰: Դ. Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունի) մի անուղղակի դիտողութիւնից այն տպավորութիւնն է ստացվում, որ Հովհաննես Ղրիմեցու «Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ սուրբ Նշանին հիմնեալ յարձանագիրս նախնեաց» աշխատութեան «Շարակարգութիւն առաջնորդաց ուխտին Սանահնի հանդերձ արձանագրութեամբք նորին» խոյազրուվ հավելվածական հատվածը Հարութիւն վարդապետի հեղինակութիւնը պիտի լինի²¹: Թեպետև Ղրիմեցու գրքում այդ մասին տառացիորեն ոչինչ չի ասված, բայց նրա խոսքերը, թե «...ղարձանագիրս Սանահնի զբովանդակն շեղաք ձեռնհաս անձամբ գաղափարել կամ սրբագրել, վասն որոյ եթէ թերութիւնք ինչ կամ վրիպակք յոմանս ի սոցանէ յայտնեսցին, հայցեմք ներողամիտ լինիլ»²², — ենթադրել են տալիս, որ գրքի այդ բաժնի համար օգտագործվել են ուրիշների (հետևաբար՝ Հարութիւն վարդապետի) հավաքած նյութերը, որոնք առանձին արձանագրութիւնների սլատճեններ են սոսկ եղել:

Իսկ ո՞վ է «ֆուանկօղ պատմագիր նոր» հորջորջված անձնավորութիւնը, որը հյուպատոս Գամբայի միջոցով դիմել էր ներսես Աշտարակեցուն, վերջինիս վաղուցվա հետամտումներին պատշաճող խնդիրքով և ցանկանում էր ստանալ Հաղբատի և Սանահնի վիմագրերի ընդօրինակութիւնները:

Այդ «նոր պատմագիրը», առանց այլևայլութեան, ֆրանսիացի հռչակավոր արևելագետ Անտուան Սեն-Մարտենն էր (1791—1832), որը հայագիտութեանը մեծ ծառայութիւն էր մատուցել չորս-հինգ տարի դրանից առաջ լույս ընծայած «Mémoires historiques et géographiques sur l'Arménie» («Պատմական և աշխարհագրական յիշատակագիրք ի վերայ Հայաստանեայց»)

¹⁹ Նույն տեղում, № 165/667, էջ 4բ—5բ:

²⁰ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1957, էջ 67:

²¹ Տե՛ս «Արձագանք», 1884, № 43, էջ 628: «Յովհաննու Ղրիմեցույ Պատմութիւն...», էջ 146—164:

²² «Յովհաննու Ղրիմեցույ Պատմութիւն...», էջ 10:

հրկհատոր աշխատություններ (1818—1819, Փարիզ)։ Այս գործի ներկրորդ գրքում՝ Մտնիփանոս Օրբելյանի «Պատմություններ» կցված ծանոթագրությունների մեջ (էջ 248 և 300), նրկու տեղ, մեջ են բերվում հատվածական արձանագրություններ (Հաղբատի վանքի փոքր գավթի մատուռներից մեկի պատից և Հաոիճի վանքի կաթուղիկե եկեղեցուց), որոնք, սակայն, փոխ են առնված Կլապրոտի աշխատասիրություններ և Հարություն Արարատյանի գործակցությամբ 1818 թ. Փարիզում հրատարակված՝ «Յիշատակարան Յովհաննու Ոսկերչեան» գործից (Ֆրանսերեն)։

Վերջապես, Սեն-Մարտենը միակն էր ֆրանսիացի հայագետներից, որը իր հետազոտությունների մեջ օգտագործում էր հայոց վիմագրերը և դրանց նկատմամբ իր հետաքրքրությունը շնորհագրեց մինչև կյանքի վերջը²³։

1831 թ. դեկտեմբերի 22-ին հռչակավոր բնագետ Ալեքսանդր ֆոն Հումբոլդին ուղղված մի ընդարձակ նամակում Սեն-Մարտենը իր ավելի քան տասնչորս տարիների բաղձանքն էր արտահայտում՝ Հայաստանը պատմահնագիտական հանգամանալից ուսումնասիրության ենթարկելու, և Հումբոլդի ազդեցիկ միջնորդությունն էր խնդրում, որպեսզի ռուս կառավարությունը ուշադրություն դարձնի իր վրա և, իբրև կարող անձնավորության, նյութական աջակցություն ցույց տա՝ գիտական ուղևորության մեկնելու նորանվաճ Հայկական նահանգ, իսկ ապա մանրամասնորեն թվարկելով, թե ըստ այդմ ինչ ծրագրեր ունի իրականացնելու, հիշատակում է նաև հայոց վիմագրերի ժողովածուն։

«Հայերը ամենայն ժամանակ, քարերի վրա արձանագրած ունին հասարակական գործերը և մեծ դիպվածների հիշատակները։ Նորանց պատմությունը, այսպես ասած, քարերի և իրենց երկրի ժայռերի վերա գրված արձանագրություն է։ Թագավորների հին պալատները, ամրոցները, կամուրջները, կրոնական և հասարակական շինությունների պատերը ծածկված են,— ես այդ գիտեմ,— արձանագրություններով, որոնց պատճենները շատ մեծ նշանակություն կունենան։ Նս գորանցից մի քանի հատ ունիմ, նորանք ինձ հասել են Մեծ Հայաստանից (նկատի ունի Արարատյան աշխարհը—Պ. Հ.), և բավական են ինձ մի բարձր գաղափար տալու համագույն տեսակ ժողովածուի օգտակարության մասին»,— գրել է Սեն-Մարտենը²⁴։ Հայագետի այս բաղձանքը չիրականացավ։ Ռուս կառավարությունը հորդորեց նրան առժամանակ սպասել, իսկ մեկ տարի հետո վրա հասավ մահը...

Առաքվեցի՞ն, արդյոք, Հաղբատի և Սանահնի վիմագրերի պատճենները

23 Որ այդ անձնավորությունն իսկապես Սեն-Մարտենն է, անուղղակիորեն երևում է նաև Հովհաննես Ղրիմեցու «Պատմության» հետևյալ հատվածից. «Իսկ դարձեալ իմաստնոցն եւ գիտնոց եւրոպէականաց, որպէս և մերասեր գիտնականացն խմբից ցանկալի և ախորժական գիտեմք, այնու զի յարգի է յոյժ առ նոսա նախնեացն հետիւնք և յաւէտ հնագոյն արձանագրութիւնքն, որոց է բազում անդամ, որպէս ասացաք, նպաստ մեծ ընծայել ի լուսաւորութիւն նախնեացն վիպասանական գրուցաց, որպէս եւ յետնոց իսկ միանգամայն ի յօրինուածս ճշգրիտ պատմութեանց եւ ժամանակագրութեանց։ Եւ յայս իսկ ժողովն ուսումնարանի Արեւելեան լեզուաց, որ ի Փարէզ հռչակաւոր քաղաք և արքայանիստ զհետ է մեծապէս զայսպիսի արձանագիրս հնոց ի ձեռս բերել» (էջ 8)։ Այս տողերի մեջ միաժամանակ, Հովհ. Ղրիմեցին, ինչպես տեսնում ենք, վիմագրերը գիտում է իբրև պատմական արձանահավատ վավերագրեր և վաղընջական գրույցների հավաստիությունն ստուգելու կարևորագույն միջոցներ, ըմբռնում, որը ոչ միայն ճշմարիտ է, այլև արժանի առանձնահատուկ ուշադրության։

24 «Արձագանք», 1893, դեկտեմբերի 10, № 148.

Սեն-Մարտենին, դժվար է առայժմ հաստատ որևէ բան ասել, քանի որ հնարավորություն չունենք անձամբ հետախուզելու գիտնականի դիվանը, իսկ ձեռնհաս անձանց՝ դեռ անցյալ դարում գրածների մեջ (նրա ձեռագիր ժառանգության մասին) արձանագրերի վերաբերյալ բան չկա:

Այս է ճշմարտությունը ներսես Աշտարակեցու հանձնարարությամբ Հաղբատի ու Սանահնի վիմագրերը հավաքելու վերաբերյալ, որը պետք է նկատի առնել հայ հնագիտության հիշյալ ճյուղի պատմությունը շարադրելիս, պատշաճը հատուցելով և՛ ներսես Աշտարակեցուն, և՛ Հովհաննես Ղրիմեցուն, և՛ Սեն-Մարտենին, և՛ նրանցից շատ ու շատ առաջ՝ Զաքարիա Սարկավագին, Եսայի Հասան-Ջալալյանցին, Հովհան Ոսկերչյանին, ավելի հետո՝ Հ. Շահ-խաթունյանցին ու Ս. Զալալյանցին, ինչպես նաև շթաքցնելով ճշմարտությունը Հարություն Տեր-Բարսեղյանցի մասին, որի նպաստը հայ վիմագրության պատմությանը շատ է աննշան ու երկրորդական, մինչդեռ Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու մեծ գործը հիշյալ մարզում ըստ ամենայնի չի՝ արժեքավորվել:

Երևի, ինչ-որ խորհրդանշական բան կա, որ միևնույն Քանաքեռն էր հայությանը պարզեում հոգևոր մշակույթի երկու մեծ գործիչների՝ Զաքարիա Սարկավագին և Խաչատուր Աբովյանին, որոնցից մեկը սկզբնավորում էր հայոց վիմագրերի հավաքման գործը, մյուսը՝ մեր նոր գրականությունը, իր հանձարեղ «Վերք Հայաստանի» վեպով:

II

«Վերք Հայաստանի» պատմավեպի հղացումն ու ստեղծագործումը ժամանակավրեպ երևույթ չէր: Նրան զուգընթաց և նույն տարիներին որոշակի աշխուժություն է նկատվում նաև մեր հոգևոր կյանքի մյուս մարզերում, առանձնապես հնախոսության ու պատմագրության մեջ: Արդեն ավելի քան մեկ դար Մխիթարյան վանականներն ու եվրոպացի գիտնականները ձեռնամուխ էին լինել հայոց նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների ուսումնասիրությանը՝ հրապարակ հանելով մեծ ու փոքր շահեկան հատորներ: Չամչյանի, Ինճիճյանի, Ավգերյանի, Շրյոդերի, Սեն-Մարտենի և մյուսների գործերը քաջածանոթ են բոլորին և վաղուց պատշաճ գնահատականի արժանացած: Գաղտնիք չէ սակայն, որ Արևելյան Հայաստանում, XIX դ. 30—40-ական թթ., ինչ-որ անվստահություն կար Մխիթարյանների հանդեպ, իսկ բնաշխարհիկ գիտնականների քայլերն էլ դեռ երբեք էին: Միայն 1840-ական թթ. սկզբներին այստեղ հրապարակ եկան պատմա-հնախոսական-տեղագրական լուրջ երկասիրություններ, որոնց վիճակված էր կարևոր դեր խաղալու հայագիտության պատմության մեջ: Մեկը դրանցից էջմիածնի գիտնական-միաբան Հովհաննես Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ» երկհատոր աշխատությունն էր՝ լույս տեսած 1842 թ. (էջմիածնի տպարանում), մյուսը՝ Սանահնի վանքի կրոնավոր Սարգիս Զալալյանցի «Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գործի առաջին մասը՝ տպագրված ղարձյալ նույն տարին, միայն թե Տփղիսի ներսիսյան դպրոցի տպարանում (երկրորդ մասը լույս տեսավ շատ ավելի ուշ, 1856 թ.): Պատահական զուգադիպություն էր այս, թե՛ հեղինակները տեղյակ էին միմյանց ծրագրերին և շտապում էին օր առաջ լույս աշխարհ հանել իրենց ամբարած նյութերը և կանխել մյուսին, պարզված չէ:

Շահխաթունյանցի հետադուտած բնաշխարհը Արևելյան Հայաստանի կենտրոնական գավառներն էին, իսկ Զալալյանցը ուշագրություն էր դարձրել ամենից ավելի հյուսիսային կողմերի վրա, ընդհուպ մինչև Վիրք ու Աղվանք։

Մեկը 1820-ական թթ. վերջերից սկսած շրջել, հավաքել, ուսումնասիրել ու նկարագրել էր այն ժամանակվա Երևանյան նահանգի կամ պատմական Հայաստանի Այրարատյան աշխարհի Արագածոտն, Նիգ, Կոտայք, Վարաժ-նունիք և Սյունյաց աշխարհի Դեղարքունի գավառների բնակավայրերն ու հնություն հիշատակարանները. մյուսը՝ շուրջ մեկ տասնամյակ հետո սկսելով իր ուղեորությունները, հավաքել էր Լոռի-Տաշիրի, Արցախի, Շիրակի ու հարակից շրջանների վիճադրերը՝ մասամբ միայն նախորդին կրկնելով։

Շահխաթունյանցի աշխատությունը թե՛ բովանդակությամբ և թե՛ խորագրով սերտ աղերսակցություն ուներ Ղուկաս Ինճիճյանի «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» (Վենետիկ, 1822) գրքին, նրա հետ լռելյայն բանավիճելու համար էր գրված։ Ինքն էլ չէր թաքցնում, որ իր գործն ստեղծելիս (դրան ձեռնարկել էր Թ. Ղորղանյանի գրավոր հրավերով) ջանացել է ո՛չ միայն պատմական Հայաստանի Այրարատյան աշխարհի հիշյալ գավառների հին ու արդի վիճակը նկարագրել, կանգուն ու ավերակ բնակավայրերի իրական դրությունը նկարագրել, վիճադիր հիշատակարանները ընդօրինակել, այլև տվյալ բնաշխարհի մասին Մխիթարյան միաբանի թույլ տված սխալներն ուղղել²⁵։ Զալալյանցն էլ իր երկասիրության խորագիրն ընտրելիս, թվում է, Մինաս Բժշկյանցին էր հետևել, աչքի առաջ ունենալով վերջինի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սօրելոց ի նախնեաց Անի քաղաքին» (Վենետիկ, 1830) ուղեգրությունը։

Երկու հեղինակներն էլ, անտարակույս, ավելի բարեպատեհ վիճակում էին, քան Մխիթարյանները։ Եթե վերջինների հիմնական աղբյուրը հալ հին մատենագրության հուշարձաններն էին և մասնավոր անձանց, շատ հստակ ոչ հավաստի հաղորդումները, ապա առաջինները՝ Շահխաթունյանցը և Զալալյանցը, անձամբ շրջել էին իրենց նկարագրած վայրերում, աչքով տեսել ամեն ինչ, սեփական ձեռքով թղթի վրա փոխադրել վիճական արձանագրությունները։

Պատմական ճշմարտության սույն մեղանշած չենք լինի, եթե արձանագրենք, որ Շահխաթունյանցի և Զալալյանցի գործերը հայագիտության սուղաջին ծիծեռնակներն էին արևելահայ իրականության մեջ և որպես այդպիսիք՝ լուրջ մրցորդներ Մխիթարյանների աշխատությունների։ Նրանց հաջորդեցին Մանվել Կյումուշխանեցին, Աբնլ Մխիթարյանը, Մեսրոպ Սմբատյանը, Սարգիս Հայկունին, Մակար Բարխուդարյանը և շատ ուրիշներ։

Ակադեմիկոս Հ. Օրբելին հայկական վիճադրերին նվիրված իր դասախոսություններից մեկում (1914) անդրադառնալով Շահխաթունյանցի և Զալալյանցի գործերին, դրանք բնութագրել է «դասական» մակդիրով, հայտարարելով, թե այդ գրքերն «երկար ժամանակ չեն կորցնի իրենց նշանակությունը, իբրև անփոխարինելի հավաքածուներ», քանի որ հետագա վիճադրեր «հավաքողների աշխատությունները... ո՛չ մի քայլ առաջ չանցան նրանցից»²⁶։ Սա, ինչ խոսք, իր ժամանակի համար արդարացի գնահատական էր։

25 Տե՛ս «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի...», հատ. 1, էջ 3—5։

26 «Դիվան հայ վիճադրության», պրակ 1, էջ XI։

Այս երկու, հիրավի, խիստ արժեքավոր աշխատությունները ունեն ընդհանուր շատ բան, բայց և՛ ակնհայտ տարբերություններ։ Երկուսի բնույթն էլ հնախոսական-տեղագրական էր, ընդարձակ տվյալներ էին հաղորդում Հայաստան աշխարհի հնօրյա բնակավայրերի, շինարարական կոթողների, սրբավայրերի ու տաճարների մասին՝ առատորեն մեջ բերելով տպագիր ու ձեռագիր հիշատակարաններ և, առաջին հերթին, վիմական արձանագրություններ (երբեմն էլ՝ ժողովրդական ավանդություններ), միայն թե Շահաթունյանցը խստորեն ընտրություն էր կատարել աշխատության հիմքը կազմող նյութերի մեջ, ինչպես նաև տարրորոշել իր հետադուստած բնաշխարհի սահմանները, ավելի Ս. Ջալալյանցը, թեպետև որոշ հաջորդականությամբ, արտագրել էր շրջագայությունների ժամանակ իրեն հանդիպած և վերծանելի ամեն կարգի վիմագիր հիշատակարան։ Մեկը խոսեցնում էր նյութը, դրա օգնությամբ հիմնավորում կամ մերժում պատմա-ժամանակագրական այս կամ այն խնդիրը, մյուսը՝ համարյա խուսափում նման հարցերից։

Շահաթունյանցի գործն աչքի էր ընկնում գիտական լրջությամբ և իր արժեքի համար նախանձելի ճշտությամբ. ամբարած փաստական նյութի առումով այն այսօր էլ չի՝ կորցրել իր արժեքը, մինչդեռ Ջալալյանցը, որի «Ճանապարհորդութիւնը» վաղուց հնացած է և արձանագրությունների վերծանությունն էլ կատարված է ոչ միշտ գաղափար օրինակին հարադատ, այնուհանդերձ երբեմն դիմում էր հայրենասիրական զեղումների՝ զգայացունց ոճով դատողություններ անելով հայոց հին ու նոր բախտի մասին, հանգամանք, որ գրավում էր ռոմանտիկ հոգիներին։

Աբովյանը տեղյակ էր և՛ մեկի, և՛ մյուսի ստեղծմանը, ծանոթ ու մտերիմ էր երկուսի աշխատասիրողներին էլ։ Շահաթունյանցը նրա վանական տարիների գաղափարակիցներից էր, Ջալալյանցը՝ տիգրիսյան շրջանի բարեկամներից, գուցե նաև՝ Հաղբատ-Սանահնի վանքերում պանդխտելու օրերի (1826—1828) ընկերներից։ Ետդորպատյան տարիներին ևս շարունակվում էին Աբովյանի շփումները Շահաթունյանցի հետ։ Հայտնի է, որ 1840 թ. առաջին կեսին (թե՛ ավելի վաղ) բարոն Պավել Հանը (որը 1837 թ. Տիգրիսում էր՝ Անդրկովկասի վարչա-տնտեսական վերակառուցման վերաբերյալ նախագիծ կազմելու համար) Պետերբուրգի կայսերական ակադեմիային է ուղարկում Շահաթունյանցի «Ստորագրութեան» առանձին հատվածների ռուսերեն թարգմանությունը²⁷, իրողություն, որը, թվում է, թե Աբովյանի խորհրդով է կատարվել։ Չմոռանանք, որ Աբովյանն ու Հանը չափազանց մտերիմ էին և

²⁷ Այս մասին զեկուցվել է Կայսերական ակադեմիայի՝ 1840 թ. օգոստոսի 28-ի նիստում։ Տե՛ս ЖМНП, 1840, մասն XXVIII, բաժին III, էջ 68—69։

Այդ ձեռագիրն այժմ պահվում է ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի մատենադարանում (№ С 46), «Описание некоторых древних монастырей, состоящих в окружности первопрестольного монастыря Эчмиадзинского, с означением находящихся в оных древних памятников и надписей» խորագրով լաղկացած է 13 հատվածից, որոնք նվիրված են Արևելյան Հայաստանի հետևյալ վանքերին. 1. Նորվիրապ, 2. Այրիվանք, 3. Հավուց թառ, 4. Մաքենյաց վանք, 5. Հովհաննավանք, 6. Սեվան, 7. Կելառույք, 8. Մարմաշեն, 9. Հառիճ, 10. Սաղմոսավանք, 11. Աստապատի Կարմիր վանք, 12. Շամախու Սուրբ Ստեփանոս, 13. Ազուլիսի Թոմա Առաքյալի վանք (վերջին երկուսը «Ստորագրութեան» հայերեն բնագրում տեղ չեն գտել)։

դնահատում ու հարդում էին միմյանց խոսքն ու խորհուրդը²⁸։ Չմոռանանք նաև, որ Հանը ժամանակի հայ մտավորականների աշխատություններից ուշագրություն էր դարձրել միայն երկու դործի՝ Հովհաննես Ղրիմեցու «Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ սուրբ նշանին» երկի և Շահաթունյանցի «Ստորագրութեան» վրա²⁹, գրքեր, որոնց հեղինակները Արուվյանի մտերիմներն էին և, ինչպես Արուվյանը, Հովհաննես Կարբեցի կաթողիկոսից հալածված ու մեկուսացված անձինք։

Հրատարակությունից անմիջապես հետո՝ հասավ Շահաթունյանցի գիրքը Արուվյանի ձեռքը, դժվար է ասել, քանի որ վերջինիս անձնական գրադարանից որևէ փշրանք չի մնացել, իսկ իրողությունը հաստատող ուղղակի կամ կողմնակի վավերագրեր մեջտեղում չկան, թեպետև 1842 թ. ամառը Արուվյանն եղել է էջմիածնում³⁰։ Հայտնի է նաև, որ 1843 թ. կեսերին Արուվյանը և Շահաթունյանցը հանդիպումներ են ունեցել Տփղիսում³¹, 1844 թ. օգոստոսի 10-ից Արուվյանի ձեռքին են եղել «Ստորագրութեան» գույգ հատորները³², իսկ 1846 թ. աշնանը գրած իր պատմական ակնարկներում (ռուսերեն) որոշ չափով օգտվել է Շահաթունյանցի գրքից³³ և այլն։

Այլ է Ջալալյանցի խնդիրը։ Վերջինիս հետ Արուվյանը հանդիպել ու խոսել է նախ՝ 1841 թ. հենց այն օրերին, երբ Ջալալյանցն ուղևորվում էր Հայաստան՝ վիմագրեր հավաքելու («ի 1841-ին³⁴ տեսանեմ զՍարգիս վարդապետն Ջալալյանց վանահայր Սանահնայ դիմեալ ի Հայաստան առ ի ժողովել զարձանագրութիւնս տաճարաց և դամբարանաց...»), իսկ ապա՝ հաջորդ, 1842 թ. հուլիսին, Երևանում։ Դրանից մի երկու շաբաթ անց, օգոստոսի 25-ին,

28 Արժե վերընթերցել Արուվյանի՝ Ք. Ֆրենկն ուղղված նամակի (1838, մայիսի 19) այս տողերը. «Առաջին պահից մինչև հիմա, շնորհիվ Անդրկովկասի ժողովուրդների ընդհանուր բարօրության ուղղված պարոն սենատորի հոգածության, ես արժանանում եմ ամենաանկեղծ համակրանքի։ Անշուշտ, եթե աստուծո օգնությամբ նրա այստեղ մնալու մեծ նպատակը, ի բարեբախտություն Վրաստանի, մի օր իրականանա, ապա հույս ունեմ, որ իմ լույսն էլ կլինի դրանում։ Քանզի չեմ կասկածում, որ իմ հույսերն ու ցանկությունները, որոնց մասին պատմել եմ նրան և որոնցով նա այնքան հետաքրքրվում է, անկատար մնան» (Խ. Արուվյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. X, Երևան, 1961, էջ 209 [210—211]։ Թարգմանությունը վերանայված է—Պ. Հ.)։

29 Այս իրողությունը արձանագրված է նաև Պետերբուրգի Ասիական թանգարանի պատմության մեջ, ուր մուտք էին գործել հիշյալ ձեռագրերը։ Գրքի հեղինակ Դորնը, թվելով 1840 թ. ընթացքում Պ. Հանի նվիրատվությունները, ավելացնում է. «Միաժամանակ նա Ակադեմիային է ուղարկել երկու ձեռագիր. մեկը՝ Հովհ. վարդապետ Շահաթունյանցի՝ Հայաստանի բազմաթիվ հռչակավոր վանքերի նկարագրությունը և մյուսը՝ Հովհ. վարդապետ Ղրիմեցու՝ նույն վանքերում եղած վիմագրերի թարգմանությունը» (Dorn Bernh., Das Asiatische Museum., St. Petersburg, 1846, էջ 92)։

30 «Դիվան հաշատուր Արուվյանի», հատ. II, Երևան, 1948, էջ 170։

31 Խ. Արուվյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. X, էջ 262։

32 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, N 114/594, թ. 40ա։ Գրքերը հետազայում Արուվյանը հանձնում է հրկրաբան Հերման Արխիին։

33 Խ. Արուվյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VIII, Երևան, 1958, էջ 286, 288 և 437։

34 Մեջբերումը արված է սույն հոդվածում քննարկվող բանաստեղծության նախաբանից։ Վերջնական տարբերակի մեջ թվականը 1842 է (Խ. Արուվյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, Երևան, 1948, էջ 235), այնինչ նախնականները, որ տպված են «Մեղու Հայաստանի» (1858, N 4, էջ 29—30) և «Արձագանք» (1892, N 77) պարբերականներում, ունեն 1841, որ հիշտ է։ Մեր մեջբերումը «Մեղու Հայաստանիից» է։

Աբովյանի մասնավոր փպրոցի աշակերտներից մեկի հայրը՝ Գրիգոր Ամբարյանյանը, Գյարգյառից գրում էր նրան. «Իմ բարեկամ Սարգիս վարդապետն ասաց ինձ, որ Դուք եղել եք նրեանում և նրա հետ հաճելի գրույցներ ունեցել։ Շատ եմ ափսոսում, որ Տփղիս վերադառնալու Ձեր ճանապարհին չկարողուցար անցնել մեր Գյարգյառով»³⁵։

Առաջին չի հաջողվել պարզել, թե Ջալալյանցի ուղեգրական երկի առաջին հատորը 1842 թ. ո՞ր ամսի ո՞ր օրը լույս աշխարհ եկավ։ Թվում է՝ տարվա առաջին կեսին նրա տպագրությունն ավարտված պիտի լիներ, և հեղինակը Աբովյանին կարող էր ընծայել գրքի առաջին օրինակներից մեկը։ Անգամ եթե գիրքը աշնանն էլ տպագրված լիներ, բացառված չէ, որ Աբովյանը կարող էր կարճացած լինել ձեռագիրը։ Հաղիվ թե պատահական զուգահեռությունն արդյունք լինի այն իրողությունը, որ Ջալալյանցի հետ միաժամանակ, նույն տարիներին (1841—1842 թթ.), «Վերք Հայաստանի» վեպը ստեղծելիս, Աբովյանն ևս իր ասպագա ընթերցողների ուշադրությունն էր հրավիրում Հաղբատի և Սանահնի հուշարձանների ու վիմագրերի վրա, ընդգծում ժողովրդի ազատաբաղձ ոգին և ազգային ավանդությունները մշտապես վառ պահելու գործում նրանց ունեցած վճռական նշանակությունը։

Բավականաչափ ընդարձակ է վեպի այդ հատվածը, բայց մենք կբավարարվենք ամենաէական արտահայտությունները մեջ բերելով. «Ամեն քար Իրանց համար (նկատի ունի լուեցիներին—Պ. Հ.) դիրք ա, ամեն ապառաժ նրանց համար պատմություն, ամեն հին բերդ, քանդված մատուռ կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էս տեղ, նրանց համար կենդանի վարժապետ։ Ամեն գերեզման, ամեն արձան (իմա՛ արձանագրություն—Պ. Հ.) նրանց համար կենդանի վկա ու պատմագիր։ Լոռվա անառիկ բերդը, Սանահնա ու Հախպատի վանքերի պատերը, տաճարները, սրահները՝ նրանց համար վարժատուն։ Իրանք զորթ և՛ կարթալ շեն գիտիլ, ամա սրտներումը երկաթի պես ագրած՝ թե էս է՛ն սուրբ հողերն են, է՛ն սուրբ դաշտերն են, ուր մեծն Շահն-շահ, Աշոտ Բագրատունի, Սմբատ...»³⁶։ Զաքարե սպասալար, Արղությանց Երկայնաբաղուկ նախնիք, Հովհան Օձնեցի իմաստասեր, Հովհաննես Երզնկացի՝ արծվի պես խոչանային, առյուծի պես մռնչային ու հրեղեն սերովբեի ու բերովբեի պես՝ թուրը ձեռ առած՝ երկրումս Օմարի, Հոնաց, Զինգիդխանի, Թամուրլանգի՝ հոգին քաղեին, երկներումը իրանց համար անմահության բրաբիոն, անթառաժ սլաք պատրաստեին...»³⁷։

Հնություն հիշատակարանների նշանակության այսօրինակ ըմբռնում Ջալալյանցն, իհարկե, չուներ, բայց նրանց նկատմամբ հանդես բերվող այսօրինակ հիացմունքի, այսօրինակ վարակող անմիջականության ինչ-որ նշույլ նրա գրարար գրքի մեջ ևս ընթերցողը կարող էր գտնել, հենց թեկուզ «Առաջաբանության» մեջ, ուր հեղինակը Երեմիա մարգարեին նմանվելով՝ ողբում էր ազգի երբեմնի հպրությունը և վաղուց կորած փառքը. «Այլ աւա՛ղ դիրա-

³⁵ Գրականության և արվեստի թանգարան, Խ. Աբովյանի ֆոնդ, № 206, էջ 3։ Նամակի բնագիրը ոտաներեն է։

³⁶ «Վերքի» ընդգրի այս մասում՝ և՛ սեպերի, և՛ մարբադիր տարրերակների մեջ, Աբովյանը տեղ է թողել հետադայում Հաղբատի ու Սանահնի վանքերի և, առանձնապես, Լոռու հետ կապված պատմական ինչ-որ գործչի, թերևս Կյուրիկյան թաղավորներից մեկի անունը ավելացնելու գիտավորությամբ, որ սակայն չի իրականացրել։

³⁷ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 111, էջ 93 և 275։

դարձ անույն անկայուն բաղդին։ Այսպիսի հոյակապ շինուածը նշխարը վսեմապանծ գործող մերող դիցազանց, ոմանր ի սպառ հիմն ի վեր տապալենալ աներևոյթը եղեն, ոմանք կիսակործան զոգ մերձ են առ դուրս գերեզմանի, իսկ կէսը՝ անտէր ունիսնամ՝ ծածկեալ, կան ի մէջ մացառախիտ թփոց, գաղսնաց միայն եղեալ որջ, և հօտից պառակա՝³⁸։

Աբովյանին կայող էին գրավել ինչպես այս տողերը, այնպես էլ «Ճանապարհորդութեան»՝ հնօրյա գրչագրերի հիշատակարանների ոճով կազմված վերջաբանը, ուր նույնպիս պակաս «արտասովխառն» տողեր չկային. «Աստ սպառին բանք բալմավիշտ ճանապարհորդութեանս հասեալ ցոհահ և յԱխուրեան դետս՝ թողլով զհնութիւնս որ յայնկոյս դետոյս երկրորդում հատորոյ, սղերսելով զընթերցողս սոյն կրիւք զգածիլ որովք իմ աղիք գալարեցան ի տեսանելն զեկեղեցիս երկնանման բարձրացեալս, եղեալ պառակ հօտից և գոմ անասնոց. զապարանս մերոց արքայից և դիցազուն իշխանաց՝ բնակութիւն աւաղակաց և ապատոհմ ոամկաց, կամ եթէ մա՛րթ է ասել որջ գաղանաց. զայդիս և զանդաստանս մացառօք լցեալ, և զամենայն շքեղութիւնս անապատացեալ, որպէս զի նշխարք մնացուածոց մերոց նախնեաց ցօղեալ արտասուօք Հայրենասիրաց՝ անջինջ դրոշմեսցին ի սիրտ և յոգի որդւոց և թոռանց, մինչև կրկին գթացեալ ի վերայ նոցա ամենակալ աջոյն բարձրելոյ դարձուցել զնոսա յառաջին շքեղութիւն իւրեանց ի փառս անուան իւրոյ և ի մխիթարութիւն աճիւնացեալ մերոց ոսկերաց»³⁹։

Վիժագրերի նկատմամբ Աբովյանի հետաքրքրությունը նոր չէ, որ արթնանում էր։ Ընդհանրապէս, դժւար է Հայաստանում ցույց տալ վաղնջական ժամանակներից մնացած որևէ հուշարձան կամ կոթող, որոնց վրա չլինեն հայտնի ու աննշան անձանց ամենատարբեր գործերի մասին պատմող վիժագիր հիշատակարաններ։ Հենց Քանաքեռում ու մերձակա վայրերում, կամ թե Աբովյան տոհմի ամենից ավելի հարգած սրբավայրերում եղածներից շատերը իս. Աբովյանը տեսել էր դեռ մանկուց, ամենօրյա թափառումների և ուխտագնացությունների ժամանակ, զարմանքով ու զմայլանքով դիտել նրանց պատերին թառած հնօրյա բարձրաբանդակները և խորհրդավոր գրերը, իսկ սրդեն 1820-ական թթ. վերջերին, մինչ ինքն ու իր համախոհները (Հովհաննես Շահխաթունյանց, Մսեր Մսերյանց) մանւել Կոմիտասանցու ղեկավարութեամբ ծրագրում էին Սեանա կղզում Մխիթարյանների օրինակով հոգևոր միաբանություն հիմնել, ի թիվս այլ լուսավորական ձեռնարկումների, անհետաձգելի գործ էին համարում նաև վիժագիր հիշատակարանների հավաքումը. «Արձակել երբեմն զմի ոմն յանդամոց իւրոց... շրջիլ յայլեայլ նահանգս և ի քաղաքս Հայաստանի ի գիւտ արձանագրաց», — գրված է միաբանութեան կանոնադրութեան մեջ⁴⁰։

Ջալալյանցի գիրքը հիմա պարզապէս այդ հին մտապատկերներն ու հետախնդրություններն էր կյանքի կոչում։

Զրույցները Ջալալյանցի հետ, նրա գրքից վերևում բերված տողերի և մյուս հատվածների ընթերցումը, անձնական տպավորությունները Հայաստան աշխարհի կանգուն ու բեկված կոթողներից, ավերակ վանքերից ու վիժական

38 Ս. Վ. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 5։

39 Նույն տեղում, էջ 229։

40 Պ. Հակոբյան, հաշատուր Աբովյան, Երևան, 1967, էջ 293։

հիշատակաբաններից, արդեն վաղուց, ապառաժի նման Աբովյանի հույուն ծանրացած՝ ալեկոծում էին այն ու արթնացնում մոռյլ խոհեր հայ ժողովրդի ապագայի և նոր վերածնության զժվարությունների վերաբերմամբ, դառնալով յուրատեսակ վեբքեր: Միայն հիմա են այդ ամենը ներդաշնակ համահնչունությամբ դուրս հորդում, իբրև «վիրալից սրտի ողբերգություն» և լուսավոր ուղերձի ձևով Զալալյանց վարդապետին մատուցվում 1842 թ. հունիսի 24-ին:

Ծաղիկք Արամեան դաշտաց խնկածին
Վաղուց ցամաքեալ՝ դնին փոշնթաղ.
Ո՞ւմ արդ ի խնդիր հայրենեաց որդին
Ելեալ՝ տարագրի ըղձակաթ այժմ՝ ա՛խ.—

Այսօրինակ տրամաթախիծ ոճով է Աբովյանն սկսում իր հանդավոր նամակ-ուղերձը և աստիճանաբար ծավալվում մի հզոր համանվագ՝ առատ տաղ-նապալի ձայներով և նույնքան լեցուն վեհացնող ու բաղձալի կանչերով:

«Ժանտ ժամանակը», ազդարարում էր Աբովյանը, կործանել է Հայաստան աշխարհը, ամայացել է երկիրը, ցամաքել են «Արամյան խնկածին դաշտերի ծաղիկները», մամուռտել են անցյալի բեկված կոթողները, և այդ ամայության, այդ «անպա» ավերակների մեջ «հայրենյաց որդու» դիմաց հառնում են տաճարների և ասարանքների սլատերին մնացած ցան ու ցիր արձանագրությունները, որպես միակ, կենդանի վկաներ «նախնի փառաց և շքոյ Արամեանն դիցապնական դաւակաց»:

Հուսալով, որ միջուցե հայոց համար էլ բացվի «առաւօտ կենաց», նրանց մեջ էլ ներարկվի «նոր շունչ կենդանի», Աբովյանը քաջալերում է Զալալյանց վարդապետին՝ առ ոչինչ համարել աստանդական կյանքի տառապանքները. անձանձիր շարունակել հավաքել անցյալի վիմագիր հիշատակարանները, քանի որ նման հայրենասիրական գործի համար հետնորդները միշտ երախտագիտությամբ պիտի հիշեն նրա անունը:

• Էլի ինչ-որ բան, կարծես, Աբովյանը ուղում է ասել Զալալյանցին, բայց դերադասում է հանգավոր տողերն ավարտել, փոխել ոճը և այս անգամ էլ շարադրել բարեկամական նամակ, որի մեջ վերստին նույն մտքերն են կրկրնվում, նույն կանխատեսումներն արվում⁴¹:

41 Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Խ. Աբովյանի ֆոնդ, № 58, էջ 118—121 (հմտ. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 235—236): «Մեղու Հայաստանի», 1856, հունվարի 25, № 4, էջ 29: «Արձագանք», 1892, հուլիսի 3, № 77: «Լուսա», 1902, № 4, էջ 205—207: Բանաստեղծությունը և նամակը շարադրելուց հետո Աբովյանն անմիջապես մի օրինակ արտագրել է տալիս ինչ-որ անվարժ գրչի (թերևս իր աշակերտ Պետրոս Մարոյանին) և ուղարկում Զալալյանցին, իսկ բուն ձեռագիրը պահում իր մոտ: Այդ առաջին ինքնագիրը մեզ անծանոթ է, իսկ Զալալյանցին ուղարկածը «Լուսայում» տպագրված տարբերակն է, որի բնագիրը հետագայում ընկնում է ոմն Մ. Հ. Զ.-ի (թերևս Սարգիս Զալալյանցի ազգականներից) ձեռքը, իսկ թե սյնուհետև ինչ է եղել՝ անհայտ է: Գոյություն է ունեցել մի երրորդ ինքնագիր ևս, որ պատկանելիս է եղել Ստեփան Մանդինյանին և որն այն ստացել է անձամբ Աբովյանից, 1842 թ. օգոստոսի կեսերից հետո, Տփղիսում («Մեղու Հայաստանի» տարբերակը): Զի՛ պահպանվել դա ևս: Սրանցից բացի՝ բանաստեղծության և նամակի մի հնօրյա արտագրություն էլ եղել է ոմն Զարեհ Տիտանյանի ժողովածուի մեջ («Արձագանքի» տարբերակը): Ներկայումս մեջտեղում կա միայն մի ինքնագիր (ակադեմիական հրատարակության մեջ տպագրվածը), որ բանաստեղծության ու նամակի՝ 1844—1845 թթ. միջև կատարված վերամշակումն է:

Նամակի այն տարբերակը, որը մատուցվել է Ս. Զալալյանցին, հեղինակի երկերի ակադեմիական հրատարակության մեջ չի տեղավորված, իսկ ծանոթագրողի ընդհանուր ձևով ասած բնութագրական խոսքերն էլ մեծ մասամբ ճիշտ չեն, այնինչ հենց այդ տարբերակն է, որ ունի գրության որոշակի թվական, մի ուշագրավ «նտգրություն», բաղմաթիվ ոճական տարբերություններ, մինչդեռ ակադեմիականում տպագրվածը նամակի՝ հասցեատիրոջը հանձնելուց հետո արված վերամշակումն է և առավելապես գեղարվեստական վավերագիր, որը հաջողությամբ կարող էր ուղղված լինել նաև բոլոր նրանց, ովքեր իրենց անձը նվիրում են հայրենի հնությունների հետախույմանն ու լույս աշխարհ բերելուն⁴²։ Աբովյանն այդտեղ աշխատել է, որքան կարելի է, ազատագրվել հասցեատիրոջ և իր անձնական բարեկամության մասին վկայող ակնարկներից։

Գեղարվեստը գեղարվեստ, լայն չպիտի մոռանալ նաև, որ նամակը առաջին հերթին գնահատելի է այն ձևով, ինչպես եղել է հասցեատիրոջ ձեռքին։ Մինչդեռ հետագա վերամշակումները սոսկ գրողի հայացքների մեջ տեղի ունեցած փոփոխությունները հասկանալու համար են կարևոր, սկզբնական տարբերակը կատարված դեպքի կամ ծագած մտքերի անմիջական արձագանք է։

Ահա ինչու ավելորդ չենք համարում ստորև մեջ բերել նամակի՝ Զալալյանցին հանձնված օրինակը, որը 1902 թ. հրատարակվել է «Լումայի» էջերում, միայն թե շատ անխնամ ձևով՝ մի տասնյակից ավելի բացթողումներով և սխալ ընթերցումներով։ Հնարավորին չափ աշխատել ենք վերականգնել դրանք՝ նամակի մյուս տարբերակների օգնությամբ լրացնել չվերծանված բառերը (որոնց փոխարեն «Լումայի» խմբագիրը բաղմակետեր էր դրել) և ուղղել սխալները՝ զանազանելու համար առնելով դրանք սուր փակագծերի մեջ։

Ահա՛ թե ինչ էր գրել Աբովյանը Զալալյանցին.

Թո՛ղ, Հա՛յր պատուական, Թո՛ղ և իմ վիրալից սրտի սուղ այս ողբերկություն խառնեսցի ի թիւս երկնամասն Ձերոց ճգանց և գովանի վաստակոց։ Կոհելոց ի սէր Հայրենեայ։ Խոյս տուեալ Ձեր ամենայն կենսավայելն անդորրութեանէ՝ դիմէք ինքե՛ն> յորդոր ջերմեռանդութեամբ՝ նուիրել զհանգիստ և զժամանակ, նաև ղկեանս անգամ, ի յոյզ և ի խնդիր հնութեանց Հայաստանի՝ թաղելոց վաղուց ուրեմն ի փոշի մոռացութեան։ Ի՞նչ սիրտ դիւրագգած, ո՞ր որդի Հայրենասէր ո՛չ պաշտեսցէ և աստուածացուցէ ղեռանդն Ձեր այս տունելի։ Թէ՛ ո՛չ այժմ, թէ՛ ո՛չ ժամանակակիցք, յետնո՛րդք, յետնո՛րդք, երախտագէտն ապառնի պատրաստեսցէ՝ Ձեզ պսակ անմահ<ութեան> ի շարս ընտրելոց, որք գերագունին<զհետ> նկրտեցան վարձուց... զաղցաւորս զայս կեանաց դար վաղանցուկ՝ առաքինականն գերածայրեալ գործովք<չնորհաշուք>։ Թո՛ղ <բարինք> միայն <ապարան> յառաջեսցեն Ձեզ<յրնթացս> բազմաշարճարն Ձեր պանդխտութեան, թող աւերակք միայն անղգայ, անկենդան՝ վկայ լիցին երկընծայ <սիր>ոյդ, որ ածէնն զՁեզ վայրէ ի վայր թափառական, այն քարինք, այն սուրբ աւերակք, խնկեալք ի բուրումն անուշահոտ՝ ճգամբք և քրտամբք Հայկազանցն շնաշխարհիկ որդւոց, վկայք կենդանիք նախնի փառաց և շքոյ Արամօանյն դիւցաւնական զաւակաց. <նորա՛> թէ՛ ո՛չ

⁴² Ի դեպ, ակադեմիականի տարբերակն էլ լույս է տեսել ուղղագրական ու կետագրական սխալներով և բացթողումներով, որոնք մեկ առ մեկ նշելը դուրս է մեր նպատակից։

յերկրի <աստ անցաւոր>, ի բանակս երկնաւորաց ածցեն, ամբարձցեն զՁեր իղձ երկնահաղորդ, զՁեր հայրենասիրութիւն արժանագով: Կաթիլք արտասուաց, որք հեղանիցին ի վերայ փռչոյ՝ երկնանուէրն Հայկազանց քաջաց, հառաչանք սրտարորբոր, որք ծխեսցին ի տես՝ տխր<ամած> այնց աւերակաց՝ վերասցին, խնկեսցին ի բարձունս՝ քաղցր քան դամենայն պատարագս զոհութեան, գեր քան զամենայն ողջակէզ ուխտի: Եւ զիմն ձօնել ողջոյն սիրոյ, և զիմն նուիրել համբոյր սրբութեան՝ սրբազան այնց վայրաց՝ մաղթէ և աղերսէ

Զնաշխարհիկ Հա՛յր պատուական

Հայրենեաց և Ձեր որդի պատրաստական,

Ձեր՝ հոգեմաշ

Խաչ. Լևոնովեան.

Ի 24-ն յուլիսի

Ի 1842 ամի

յիբեան

ՅԳ. Ներեցե՛ք ինձ՝ Հա՛յր՝ զի թուղթն այսպէս ապականեալ է. ո՛չ ես, այլ ձեռն ան<վարժ արար զ>այս, և իս շունէի ժամանակ՝ կրկին արտ<ագրել> գայն: Խ. Ա.

Աբովյանն իր բանաստեղծութիւնը, ինչպես տեսնում ենք, «Վիրալից արտի ողբերգութիւն» է անվանել, և ո՛չ պատահականորեն: Դրանով կարծես նա կամեցել է ընդգծել այն ընդհանրութիւնը, որ կա «Վերք Հայաստանի» վեպում և այս բանաստեղծութեան մեջ արժարժութեամբ գաղափարների միջև: «Վերքի» նման «Մաղիկը Արամեան դաշտաց խնկածին...» բանաստեղծութեան բուն խորհուրդն ևս ո՛չ թե անցյալի հերոսական գործերի միակ վկաների՝ հնօրյա բեկված կոթողների ու ավերակ վանքերի նկարագրութիւնն է, ո՛չ թե հնի ներբողումը, այլ պատմական անցյալի օգնութեամբ ազգի ժամանակակից հուզեր ու քաղաքական կյանքում առկա ճահճացումը վերացնելն ու նոր շարժում առաջ բերելը, գալիքի հանգեպ ժողովրդի մեջ հաւատ ներշնչելը:

1842 թ. գարնանից սկսած Աբովյանի կացութիւնը միախառնական չէր: Անդրկովկասյան դպրոցների վերատեսչութեան շրջաբերականներն ու կարգադրութիւնները ավելի ու ավելի սահմանափակում էին նրա լուսավորական գործունեութեան ոլորտը՝ արդեն տարվա վերջերին հարկադրելով փակելու մասնավոր դպրոցը, որը կոչված էր հայութեան լուսավորութեան համար անձնվեր ուսուցիչներ պատրաստել:

Ջարմանալի է, որ հոգեկան այսպիսի ծանր վիճակում, տառապելով ու հալածվելով՝ Աբովյանն այնուհանդերձ հավատում էր երբեք բացվող լուսո առավոտյան, փորձում նույն հավատը ներշնչել նաև իր ընթերցողներին, քալալայանցին ու մյուսներին, դրանով իսկ, թերևս, ամենից ավելի գոտեպնդելով ու ոգևորելով իրեն.

Հաւաքեա՛. գոնէ զցիրս սերմանեաց.

Հաւարեա՛՝ իմ Հայր՝ Հայրենեաց որդի.

Դուցէ բացցի մեզ առաւօտ կենաց,

Փշել ի նոսա նոր շունչ կենդանի:

Մինչ մուայլ այս մթին՝ խաւար կուրութեան

Դարձցի ի պայծառ շող արփիահրաշ...

Ամենևին էլ թող տարօրինակ չթվա, որ Արովյանը, որը մեկ-երկու տարի առաջ իր տեսական աշխատություններում գրաբարը համարում էր հայոց հոգևոր զարգացման ու լուսավորության զլխավոր խոչընդոտը⁴³, հանկարծ վերստին գրում էր գրաբար և արժեքավորում էր մի հեղինակի աշխատություն, որը նույնպես գրաբարով էր գրված: Պատճառը պարզ է. Ջալալյանցի գիրքը հայերի առջև բաց էր անում նրանց վառավոր անցյալը, ծանոթացնում նախնիների ստեղծած մեծ ու հարուստ քաղաքակրթությանը, անուղղակիորեն հաստատում, որ նրանք օրինական ժառանգորդն են դրա և կարող են պատմության դատաստանի առջև կանգնել բաց ճակատով:

«Վերջի» ստեղծագործումից ե, հատկապես, «Պարապ վախտի խաղալիքը» կազմելուց հետո գրաբարի հանդեպ Արովյանի ունեցած վերաբերմունքի մեջ ինչ-որ ջերմության շունչ սկսեց երևալ, բայց դա հատուկ ուսումնասիրություն պահանջող հարց է:

Ամեն ինչով նպաստել հայ ժողովրդի վերածննդին և խրախուսել այդ գործի համար ամենաշնչին լուծման իսկ մոծողին, ինչ կերպ էլ դա կատարվի, այս և՛ր ետդորպատյան տարիներին Արովյանի հիմնական նպատակը: Ջալալյանց վարդապետը հավաքելով հայոց վիճազրեքը՝ յուրովսանն նպաստում էր մեր ազգային դարթոնքին, և Արովյանը դրա համար մեծարում ու քաջալերում էր նրան, անձամբ, իհարկե, շատ խնդիրներում Ջալալյանցից տարբեր տեսակետ ունենալով, հասարակական տարբեր խավերի վրա հենվելով, տարբեր գաղափարախոսություն քարոզելով⁴⁴:

АРМЯНСКИЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ И ХАЧАТУР АБОВЯН

Доктор. филол. наук П. О. АКОПЯН

(Р е з ю м е)

В первой части статьи, на основе новых материалов, восстанавливается история собирания армянских лапидарных надписей с конца XVII в. до 30-х годов XIX в. Привлекается внимание к некоторым рукописным сборникам надписей (Иоаннеса Иоаннисяна Мшеци, Исаака Саградяна), которые до настоящего времени оставались вне поля зрения специалистов по армянской эпиграфике. Устанавливается роль За-

43 Հմմտ. «Որքան էլ գրաբարն իր արտակարգ հարստությամբ, իր կատարելությամբ և իր գրական արժանիքներով բարձր լինի, այնուամենայնիվ այդ լեզուն է միակ արգելակող պատճառը, որ խեղճ ժողովուրդը մինչև հիմա զուրկ է մնացել զարգացման միջոցներից» (Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. V, Երևան, 1950, էջ 40 [46]):

44 Միայն Արովյանին չէ, որ ոգևորել է Ջալալյանցի ձեռնարկում: Նրանից տարիներ հետո ու ավելի բարեպատեհ ժամանակներում, 1880—1890-ական թթ. այդ գրքով խանդավառված էր եսև նրա գրական ավանդների ժառանգորդը՝ Հովհ. Թումանյանը, որի ինքնակենսագրական գրառումներում հանդիպում են թեպետ ժլատ, բայց խիստ պերճախոս այս խոսքերը. «Հասան-Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան». սեր դեպի արձանագրությունները և արձանագրելը պատի վրա» («Թումանյան», Ուսումնաիրություններ և հրապարակումներ, հատ. II, Երևան, 1965, էջ 415): Ուրեմն՝ Ջալալյանցն, այնուամենայնիվ, իբրև պատմաբան թույլ լինելով՝ Թաքնված գորություն ունեւ ընթերցողի մեջ հնության հիշատակարանների հանդեպ սեր արհնացնելու:

кария Саркавага Канакерци как первого составителя свода армянских лапидарных надписей и соответствующих правил для сбора этих памятников духовной культуры Армении. Приводятся новые данные о французском арменоведе Сен-Мартене в связи с его намерением составить свод подобных надписей Ахпатского и Санаинского монастырей.

Во второй части статьи указывается, что появление романа Х. Абовяна «Раны Армении» явилось логическим следствием того культурного подъема, который наблюдался в армянской действительности 30—40-х годов XIX в. Приблизительно в те же годы в Восточной Армении издаются и первые арменоведческие труды (О. Шахатунянца, С. Джалалянца), которые оставили заметный след в армянской историографии.

Далее раскрываются личные связи Х. Абовяна с первыми отечественными арменоведами, воспроизводится творческая история его стихотворения «Цветки фимнамные полей Армянских...», стимулом для написания которого послужила инициатива С. Джалалянца по собиранию и изданию древних армянских лапидарных надписей. Х. Абовян, не разделяя взглядов С. Джалалянца и других относительно путей преобразования духовной жизни армян, тем не менее сотрудничал с ними, полагая, что их деятельность так или иначе способствует пробуждению национального самосознания, единению армянского народа.